

## Հարցաթերթ

Հարգելի ուսանող, խնդրում ենք Ձեզ պատասխանել ստորև նշված հարցերին, ինչի արդյունքում կմշակվի Ձեր մասնագիտական կողմնորոշմանը նպաստող բուհի քաղաքականությունը

Եթե մինչ այս պահը Դուք ընտրել եք որևէ մասնագիտություն, որ կուզեիք ստանալ կլինիկական օրդինատուրայում, ապա խնդրում ենք պատասխանել 1-ից մինչև 5-րդ և 8-րդ հարցերին, եթե դեռ չեք ընտրել պատասխանեք միայն 6-րդ, 7-րդ և 8-րդ հարցերին

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

1. Ի՞նչ մասնագիտություն եք ընտրել (նշեք մասնագիտությունը) \_\_\_\_\_

2. Ձեր ընտրած մասնագիտությունը ո՞ր ամբիոնում կամ բազայում (եթե դրանք մի քանիսն են) կուզեիք ստանալ և ինչու՞ (նշեք ամբիոնի կամ բազայի անունը և պատճառը) \_\_\_\_\_

3. Տվյալ մասնագիտությունն ընտրել եք որովհետև (ընդգծեք Ձեր կողմից նախընտրելի պատասխանը կամ պատասխանները)

ա. դեռևս բուհ ընդունվելուց առաջ էիք որոշել դառնալ տվյալ մասնագետը

բ. ունեք տվյալ մասնագիտությամբ աշխատող սիրված բժշկի կերպար (եթե կարող եք, նշեք անուն ազգանունը) \_\_\_\_\_

գ. մասնագիտության ընտրության հարցում Ձեզ խորհուրդ են տվել Ձեր

– ծնողները

– բարեկամները

– ծանոթները

դ. ուսումն ավարտելուց հետո, տվյալ մասնագիտությամբ աշխատանք գտնելն ավելի հեշտ կլինի

ե. այդ մասնագիտությամբ ավելի հեշտ է գումար վաստակելը

զ. Հանրապետությունն ունի տվյալ մասնագետների կայացած դպրոց

է. տվյալ մասնագիտությամբ լավ մասնագետ դառնալն ավելի կարճ ժամանակ է պահանջում

ը. բակալավրիատում և/կամ մագիստրատուրայում տվյալ առարկայի ուսումնասիրման ընթացքում է սեր առաջացել դեպի տվյալ մասնագիտությունը

թ. տվյալ մասնագիտությամբ օրդինատուրայի անվճար տեղերը շատ են

ժ. ունեք կնքված պայմանագիր որևէ մարզպետարանի հետ

ի. Ձեր ծնող(ներ)-ը կամ հարազատներից որևէ մեկը այդ մասնագիտության կրող է

4. Ձեք կարող սովորել Ձեր ընտրած մասնագիտությամբ, որովհետև կլինիկական օրդինատուրայում վարձը շատ թանկ է (ընդգծեք Ձեր նախընտրելի մասնագիտությունը)

---

---

5. Որտե՞ղ եք պատրաստվում աշխատել տվյալ մասնագիտությամբ

ա. Երևանում

բ. մարզում (նշեք մարզը) \_\_\_\_\_

---

6. Դուք դեռ չեք ընտրել որևէ մասնագիտություն որովհետև (ընդգծեք Ձեր կողմից նախընտրելի տարբերակը կամ տարբերակները)

ա. սպասում եք անվճար տեղերի հայտերին

բ. դեռ տատանվում եք (թվարկեք թե ո՞ր մասնագիտությունների ընտրության միջև)

---

---

գ. 7 տարվա կրթական ծրագիրը հնարավորություն չի տվել կողմնորոշվել մասնագիտություն ընտրելու հարցում

դ. մեկնելու եք արտասահման, որովհետև

– ուզում եք կրթությունը շարունակել արտասահմանում և այնտեղ կկողմնորոշվեք մասնագիտության ընտրության հարցում

– հավատացած եք, որ արտասահմանում կլինիկական օրդինատուրայում սովորելն ավելի օգտակար կլինի \_\_\_\_\_

---

7. Ո՞րոնք են Ձեր ակընկալիքները բուհից և առաջարկությունները մասնագիտական կողմնորոշման հարցում \_\_\_\_\_

---

8. Ի՞նչ հարց (եր) կուզեք, որ ընդգրկված լինեք(ին) հարցաթերթում \_\_\_\_\_

---